

Մամիկոնեանց սերունդը է՛լ անզգայ եղաւ շղթայներու, ինչպէս անզգայ էր իւր քեռուոյն ձայնին, որ քաղցրութեամբ «Որդեակ Գրիգոր, այս օրերս էլ կանցնին, դժբախտութիւնը ինչչափ որ սոսկալի լինի մշտնջենաւոր չի կրնար լինիլ», – կ'ըսէր:

Բայց պէտք էր կ'ամա-ակամայ անողոք բախտին հնազանդիլ, մանաւանդ որ կը տեսներ Սուրեն, այդ մարդը, որուն վրայ երբեք կեանքին մէջ շողոքորթութիւն, փոքրկութիւն, վատութիւն չէր նշմարած, լռութեամբ եւ անմռունչ կը տանէր նախատանաց, հայիոյութեանց եւ հարուածոց: Այդ աննկուն Կամսարականը, որ անտարբեր էր իր անձին համար յամենայնի, միայն այն խնդրէր էր Շէյխեն, որ զինք այդ պատանուոյն չի բաժնէ, եւ արաբը խոստացաւ եւ խոստմունքին վրայ կեցաւ: Բոլոր այդ դաժանելի ուղեւորութեան մէջ, ծանրաբեռն եալ շղթայուք, շատ անգամ հետի, դատապարտեալ եղանակաց խստութեան, անօթութեան եւ ծարաւի, ինքզինք զրկելով հացին պատառէն, ջուրին կաթիլէն, ծնողական ինամքով հագիւ կրցաւ ողջ հասցնել զգրիգօր Կ'ոգովտի գաւառներէն Դամասկոսի շրջակայքը, ուր էր Շէյխ Ալիի բնակութեան վայրը:

Յոն՝ այդ գերութեան շղթայներուն մէջ թողլով այս մեր երկու նախարարագունքը, դառնանք Յայաստան, որուն մասամբ ոտնակոխ եւ եղերական վիճակը յայտնի եղաւ բաւական մեր մինչեւ հիմա տուած նկարագրէն: Տեսանք թէ ինչպէս երջանիկ տուներ բարձր եւ խոնարհ, ինկան՝ կ'ործանեցան եւ հիմնահատակ եղան դժոխային արշաւանքի մը սաստկութեան առաջ: Տեսանք նաեւ թէ այն Յունական կայսրութիւնը, որ երկրին տէր ինքզինք կը համարէր՝ ինչպէս պաշտպանեց երկիրը, – տեսնենք հիմա թէ նոքա, որոնց պարտքն էր իրենց անձանց եւ ազդին վրայ հսկել, ինչպէ՛ս իրենց պարտաւորութիւնը կատարեցին: